«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Սաների հայրենաճանաչողության ձևավորման կարևորությունը.

Դաստիարակ՝ Արմինե Ադամյան

Մանկապարտեզ՝ «Երևանի հ.29 մսուր-մանկապարտեզ » ՀՈԱԿ

2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն…….... 3

Գլուխ 1

Նախադպրոցականներին հայրենասիրական ոգով դաստիրակելու կետերը ... 5

ԳԼՈՒԽ 2

Մեր հայրենիքի նկատմամբ…….. 7

Նամակ զինվորին ……7

Հայրենասիրական դաստիարակության նպատակը …….. 8

Հայրենաճանաչողության ուսուցման դաստիարակչական

նշանակությունը …… 9

Ինչ է հայրենասիրությունը …… 10

Մեծն բանաստեղծ Համո Սահյանը Հայրենիքի մասին …… 11

Մեր հայրենիքի խորհրդանիշները …….…… 12

Գործնական աշխատանք……..…… 12

Եզրակացություն ……..……..…… 14

Գրականության ցանկ ……..……..…… 16

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայրենասիրությունը անհրաժեշտություն է, այն սկսվում է հայրենաճանաչողությունից: Հայրենաճանաչողություն դաստիարակելը այսօրվա կարեւորագույն խնդիրներից մեկն է:Նախադպրոցական տարիքի երեխաների հայրենասիրական դաստիարակության գործընթացը անհրաժեշտ է սկսել նախադպրոցական հաստատություններում, որի հիման վրա էլ կձեւավորվի նրանց հայրենաճանաչողությունը: Սերմանելով սեր հայրենիքի, քաղաքի, հայրենի բնության հանդեպ՝ ծանոթացնելով երկրի մշակույթին եւ պատմությանը: Յուրաքանչյուր երեխա յուրովի է ընկալում իրեն շրջապատող միջավայրը: Այդ պատճառով էլ հայրենաճանաչողության ուսուցումը պետք է սկսել հայրենասիրական զգացմունքների ուսուցմամբ: Հայերենաճանաչողությունը բարոյական եւ հայրենասիրական կրթություն է: Հայրենաճանաչողության արժեքային համակարգի ձեւավորումը պետք է դրվի ընտանիքում եւ մանկապարտեզում: Հայրենիքը սկսում է ընտանիքից, հարազատներից, սիրելիներից, մտերիմներից ու շրջապատից: Հետո շարունակվում է իր պատմությամբ, իր շնչով, իր ոգով, մեր հինավուրց ճարտարապետությամբ և հող ու ջրով: Սա է հայրենիքը ու ես չեմ կարող չսիրել այն: Ես հպարտ եմ, որ հայ եմ, ապրում եմ Հայաստանում և խոսում եմ հայերեն: Հայրենքիը ամեն մեկիս մեջ է, դա այն վայրն է որտեղ ծնվել մեծացել ես, որտեղ զարգանում ես, գիտելիքներ ես ստանում, կարևոր չի ոչ ազգությունը ոչ էլ ուրիշ ինչ որ մի բան եթե դու այդ հողի վրա ես ապրում, պաշտպանում այն, խնամում ապա դա քո հայրենիքն է: ԵՎ որտեղ էլ ապրես ինչքան էլ լավ լինի չես կարող քո ծննդավայրը մոռանալ, դա քո մեջ ընդմիշ մնում է: Ամեն ոգ և ամեն ինչ ունի իր անունը, բայց աշխարհում բոլոր անունների և անվանումների մեջ երկու շատ կարևոր բառեր կան՝ մայր և հայրենիք: Հայրենիքը ամեն ինչ է ինձ համար, հայրենիքը իմ օդն է, իմ ջուրն է, իմ հոգին է: Հայրենիքն այն թանկարժեք տարածքն է, որի համար իրենց կյանքն են զոհել շատ

հայորդիներ: Ուստի մենք պարտավոր ենք այն ամբողջությամբ պահպանել և փոխանցել հաջորդ սերունդներին:

Նույնիսկ մեր ազգի ծագման և ինքնանվան առաջացման մասին առաջն ային է Մովսես Խորոնացու <<Հայոց պատմությունը>>:

Շատ կարևոր է վաղ տարիքում հայրենաճանաչողության դասեր անցկացվեն, որի արդյունքում մենք կունենաք հայրենասերներ:

Հետազոտության նպատակն է երեխաների մեջ զարգացնել ազգային արժեքներ, գիտակից և պատասխանատու անհատ, ապագայում ճանաչեն ու սիրեն իրենց հայրենիքը:

Սուրբ է հայրենիքը: Յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր է կռվել ու մեռնել իր հայրենիքի համար, եթե հարկ լինի: Բայց նրան չի կարելի ստիպել, որ նա խաբի և ստի, թեկուզ հանուն հայրենիքի: ՇԱՌԼ ՄՈՆՏԵՍՔՅՈ

Մեր Հայրենիքի ցավը մեզ այնպես է մաշում, ջլատում, կեղեքում, որ մենք դառնում ենք անընդունակ ուրիշ բան հասկանալու կամ անելու: Դա հիվանդագին մի սեր է, դա մի անհաղթելի մոլություն է – դրա պրիզմայով է բացվում մեր առջև աշխարհը:

Վահան Տերյան

ԳԼՈՒԽ 1

Նախադպրոցականներին հայրենասիրական ոգով դաստիրակելու կետերը

Վաղուց թեեւ իմ հայացքը անհայտին է ու հեռվում,
Ու իմ սիրտը իմ մտքի հետ անհուններն է թափառում,
Բայց կարոտով ամեն անգամ, երբ դառնում եմ դեպի քեզ,
Մղկտում է սիրտս անվերջ քո թառանչից աղեկեզ:
Ու գաղթական զավակներիդ լուռ շարքերից ուժասպառ,
Ե՛վ գյուղերից, ե՛ւ շեներից՝ տխո՞ւր, դատարկ ու խավար,
Զարկվա՞ծ հայրենիք,
Զրկվա՞ծ հայրենիք։

Հ. Թումանյան

՝Հայրենաճանաչողության դաստիարակությունը դաստիարակների եւ սաների միջեւ մի գործընթաց է որն ուղղված է հայրենասիրական զգացմունքների զարգացմանը: Սրա նպատակն է կրթել համոզված հայրենասեր, ով սիրում է իր հայրենիքը, հավատարիմ է հայրենիքին, պատրաստ է ծառայել եւ պաշտպանել հայրենիքը: Երեխաների հայրենաճանաչողության դաստիարակությունը նախադպրոցական ուսումնական հաստատության հիմնական խնդիրներից է:

Այս ուղղությամբ գոյություն ունի մեթոդաբանական գրականություն: Դրա հիման վրա կրթական աշխատանքի այս ուղղությամբ կարելի է առանձնացնել առաջադրանքների մի ամբողջ համալիրը։

- Երեխայի սերը բարձրացնել իր ընտանիքի, տան, մանկապարտեզի, քաղաքի կ
- Երեխաների իմացություն իր արմատների մասին: Երեխաների ծանոթացում քաղաքի պատմությանը եւ ենթակառույցներին:
- Երեխաների ծանոթացում պետության խորհրդանիշներին դրոշ, զինանշան, օրհներգ:
- Այցելել մշակութային վայրեր՝ հուշարձաններ, թանգարաններ։

ւ
ղ
ի
փ

Մի շարք աշխատանքներ դեռեւս կարելի է նշել Այս խնդիրները լուծվում են երեխաների գործունեության բոլոր տեսակներում խմբասենյակում, խաղերում, առօրյա կյանքում: Դրանք երեխայի մեջ դաստիարակում են հայրենաճանաչողություն: Երեխայի հայրենաճանաչողության դաստիարակությունը մանկավարժական բարդ գործընթաց է: Այն հիմնված է հայրենասիրության՝ որպես անհատական որակի ձեւավորման վրա: Յուրաքանչյուր տարիքային փուլում հայրենաճանաչողություն եւ հայրենասիրական դաստիարակության դրսեւորումներն ունեն իրենց առանձնահատկությունները: Ավագ նախադպրոցական տարիքի երեխաների մոտ հայրենասիրությունը սերմանելու նպատակն է ձեւավորել նրանց բարի գործեր եւ արարքներ կատարելու անհրաժեշտություն: Երեխաների հայրենաճանաչողություն ասելով հասկանում ենք մեծահասակի եւ երեխաների փոխգործակցությունը համատեղ գործունեության եւ հաղորդակցության մեջ ,որն ուղղված է երեխայի մեջ մարդու համընդհանուր բարոյական որակների բացահայտմանն ու ձեւավորմանը:

Դաստիարակի աշխարհայացքը, նրա անձնական օրինակը, դատողությունները, ակտիվ կյանքի դիրքը դաստիարակության ամենաարդյունավետ գործոններն են:

Եթե ուզում ենք, որ մեր երեխաները սիրեն իրենց երկիրը ,իրենց քաղաքը պետք է նրանց ցույց տանք գրավիչ կողմից:Բայց չափահասի ոչ մի գիտելիք արդյունք չի տա, եթե նա ինքը չի սիրում իր երկիրը, իր քաղաքը, իր ժողովրդին: Երեխայի հայրենաճանաչողությունն ու հայրենիքի հանդեպ սիրո զգացումը սկսվում է ամենամոտ մարդկանց' հոր, մոր, տատիկի, պապիկի հանդեպ սիրուց: Եվ տունը, բակը, որտեղ նա ապրել է տեսարանը բնակարանների եւ մանկապարտեզի պատուհաններից, նա ուրախություն է ստանում իր հասակակիցների հետ շփվելուց, եւ իր հայրենի բնությունը' այս ամենը Հայրենիքն է:

ԳԼՈՒԽ 2

Մեր հայրենիքի նկատմամբ

Ամեն մարդ իր ներաշխարհում ունի մի վեհ զգացում՝ հայրենասիրություն և անքակտելի կապով միացած է հայրենիքին: Եվ, ցավոք, մեր հայ ազգի ճակատագիրն այնպես դասավորվեց, որ շատերը՝ լքելով հայրենիքը, ապաստան գտան օտար հողերում: Սակայն դա չի նշանակում, որ կտրեցին իրենց հոգևոր կապը հայրենիքից: Յուրաքանչյուրն է զգում իր արյունակցական կապը հայրենիքի հետ: Չկա գրող, և չկա երաժիշտ, որ հայրենիքին ձոնած ստեղծագործություն չունենա:

Այսպես, ձեզ ենք ներկայացնում հանրահայտ մտածողների հայրենասիրական ասույթներից.

1. Մեր երկրից բացի աշխարհում շատ կան ամեն տեսակի պետություններ և երկրներ, բայց մարդ միայն մեկ հարազատ մայր ունի, մեկն է նաև նրա հայրենիքը: Կ. Դ. Ուշինսկի

2. Կա հանցագործություն, որը չեն ներում,-դա հայրենիքին դավաճանելն է: Պ. Բուաստ

https://grqamol.am/article/hayreniqi-masin/

ՆԱՄԱԿ ԶԻՆՎՈՐԻՆ

Երեւանի N125 դպրոցի աշակերտների նամակները առաջնագծում ծառայող զինվորներին

Ուրախ եմ եւ հպարտ, որ հնարավորություն ունեմ քեզ նամակ գրելու եւ իմ խոսքերով քեզ ոգեւորելու ու ոգեշնչելու: Ես գիտեմ, դու պատվով ես կատարում պարտքդ մեր հայրենիքի հանդեպ, պաշտպանում ես մեզ ու մեր սահմանները, որովհետեւ դու հայ ես, իսկ քաջությունն ու խիզախությունը հայի արյան մեջ են: Ես ու իմ հասակակիցները՝ որպես ապագա զինվորներ, հպարտանում ենք քեզնով ու վստահեցնում՝ քեզ պես նվիրումով մենք էլ ենք ծառայելու:

Ռոբերտ Ղազարյան

Ամեն առավոտ, երբ բացում եմ աչքերս ու տեսնում եմ խաղաղ երկինքը, այն երկինքը, որի խաղաղությունը ապահովում ես դու՝ ամառ թե ձմեռ, սիրտս լցվում է

երախտագիտության ջերմ խոսքերով. շնորհակալ ենք քեզ, հայ զինվոր, ուզում եմ, շատ եմ ուզում , որ դու էլ ամեն օր արթնանաս խաղաղ երկնքի ներքո:

Սիրով՝ քո փոքրիկ քույրիկ

Երևանի N 29 Մ- մանկապարտեզի ավագ խմբի սաներից հայ զինվորին:

Հայրենասիրական դաստիարակության նպատակը

Հայրենիքը սիրում ես ոչ թե նրա համար, որ մեծ է, այլ նրա համար,որ քոնն է:

(Սենեկա)

Նախադպրոցական տարիքի երեխաների հայրենասիրական դաստիրակության խնդիրները բավականին շատ են: Հիմնականը սովորում են սիրո զգացում իր հայրենի բնության,ընտանիքի եվ տան համար,ինչպես նաեվ ուղղակիորեն այն երկրի պատմությունն ու մշակույթին իրտեղ նա ապրում է: Պետք է հաշվի առնել, որ յուրաքանչյուր երեխա զգում է զգացմունքների օգնությամբ իրեն շրջապատող իրականությունը:Ահա թե ինչու ցանկացած աճող սերնդի հայրենասիրական դաստիրակությունը պետք է սկսվի սիրո զգացումն իր հայրենի քաղաքի, բակի, մանկապարտեզի, երկրի նկատմամբ: Հայրենասիրություն սերմանելու գործընթացը գաղափարական աշխատանքի անբաժանելի մասն է ու հիմնական խնդիրներից մեկը: Դաստիրակի եվ ծնողի խնդիրն է երեխաների մեջ հնավորինս արթնացնել սերը հայրենի հողի նկատմամբ: Նրանց մեջ ձեվավորել այնպիսի բնավորության գծեր,որոնք կօգնեն նրանց դառնալ արժանավոր մարդ եվ իրենց երկրին արժանի քաղաքացի: Նախադպրոցական տարիքի երեխաների ծանոթությունը հայրենի քաղաքի, տարածաշրջանի հետ երկար եվ բարդ

գործընթաց է: Դրական արդյունքի կարելի է հասնել միայն համակարգված աշխատանքով: Երեխաներին պետք է սովորացնել սիրել իրենց քաղաքը, հասկացնել որ իրենց քաղաքը հայրենիքի մի մասն է:Հայրենասիրական դաստիրակության համար նախադպրոցական ուսումնական հաստատությունները օգտագործում են աշխատանքի տարբեր մեթոդներ եվ ձեվեր՝հաշվի առնելով երեխայի աշխարհայացքը: Այդ նպատակով արդյունավետ եվ հետաքրքիր աշխատանքներում ներառվում են զբոսանքներ, էքսկուրսիաներ, դիտումներ ,դիտարկումներ, բացահայտումներ որոնք ավելի կմոտիվացնեն երեխաներին այս թեմայի ընկալմանը եվ յուրացմանը: Հայրենասիրական զգացմունքների ձեվավորումն ավելի արդյունավետ է, եթե մանկապարտեզը սերտ կապ հաստատի ընտանիքի հետ: Ընտանիքի հետ աշխատանքում մանկապարտեզը պետք է ապավինի ծնողներին որպես երեխայի անհատականության ձեվավորման իրավահավասար մասնակիցներ: Հայրենաճանաչողության դաստիրակության նպատակն է կրթել հայրենասեր ով սիրում է իր հայրենիքը, հավատարիմ է հայրենիքին: Ավագ նախադպրոցական տարիքում զարգանում են բարձր սոցիալական մոտիվներ եվ զգացմունքներ:

Այս ազդեցության արմատները գտնվում են ժողովրդի լեզվում, որ երեխան սովորում է երգերից, խաղերից, տպավորություններով հայրենի բնության, աշխատանքի սովորույթների մասին,որում նա ապրում է:

Հայրենաճանաչողության ուսուցման դաստիարակչական նշանակությունը

Նախադպրոցական տարիքը երեխայի անհատականության զարգացման շրջան է: Մտածելով հայրենասիրական զգացմունքների ծագման մասին նրանք միշտ դիմում են մանկության տպավորություններին: Սա պատուհանի տակի ծառն է, սա այն փողոցն է որով նրանք քայլել են, և հայրենի մեղեդիները: Հենց այս տարիքը նպաստավոր է հայրենասիրական զգացմունքների դաստիարակման համար: Հայրենասիրության զգացումը պետք է լինի գիտակցված ու ուժեղ: Հետաքրքրություն առաջացնել երեխայի մոտ հայրենի հողի, հայրենիքի

հանդեպ սիրո զգացողության ձևավորում՝ հայրենի մշակույթին և ավանդույթնե րին ծանոթանալու համար: Ժամանակակից հանրակրթարանի խնդիրներից է երեխաներին ծանոթացնել հայ ժողովրդի պատմամշակութային ժառանգությանը, նպաստել երեխաների հայրենասիրական դաստիարակությանը: Այն տեղի է ունենում նաև երաժշտության ուսուցման գործընթացում հայրենասիրական կատարողականությունը ուսուցանելիս: Այս հետազոտության թեմայի արդիականությունը պայմանավորվում է նրանով, որ հենց հայրենիքի համար պայքարին, հայրենիքին, հայրենիքի պաշտպան հերոսներին, զինվորներին ու բանակին նվիրված ազգային ազատագրական, ժողովրդական ռազմի ու զինվոր ի երգերն են ազդում կրթվող սերունդների հայրենասիրական դաստիարակությ ան գործընթացի արդյունավետության վրա, նրանց տալիս բարոյական բարձր ուղենիշներ և նպաստում ազգային արժեհամակարգի ձևավորմանը: Հայրենասի րական երգերի, ազգային ազատագրական ու ժողովրդական երգերի ուսուցման նշանակությունը և կարևորությունը, վերջիններս օժտված են երեխայի արժեհա մակարգի ձևավորման և նրանց մեջ հայրենասիրություն դաստիարակելու հսկ այական ներուժով:

Ինչ է հայրենասիրությունը

Դուք պետք է իմանաք ձեր պատմությունը: Հայրենիքը իսկապես սիրելու համար պետք է իմանալ նրա անցյալը: Առանց անցյալի չկա ոչ ներկա, ոչ ապագա: Հայրենիքը սիրելը նշանակում է լավ քաղաքացի լինել: Հայրենիքի ամենակարևոր հայեցակարգն ու զգացողությունն այն վայրն է, որտեղ միշտ ուզում ես վերադառնալ, անկախ նրանից, թե որտեղ ես: Սա այն վայրն է, որը հնարավոր չէ փոխանակել երկրային որևէ հաճույքի հետ, քանի որ այն մի կտոր է գրավում մարդու հոգում: Ինչպե՞ս կարող ես սիրել քո հայրենիքը և ինչպե՞ս է արտահայտվում այդ սերը: Առաջին հերթին դա հայրենասիրություն է:: Սերը, անշուշտ, դրսևորվում է Հայրենիքի հանդեպ հպարտության զգացումով, նրա պատմության և հարուստ բերրի հողերի, նրա ընդարձակ գետերի մասին պատմվածքներում: Որպեսզի այլ երկրներում և այլ մայրցամաքներում մարդիկ զգան, որ Հայրենիքի մասին պատմությունը լցված է լավ զգացմունքներով: Հաճախ ասում են «Մայր Հայրենիք»՝

համեմատելով հայրենիքը մոր հետ։ Սա միայն ընդգծում է դրա կարևորությունը յուրաքանչյուր մարդու համար։ Նա ապրում է մեզանից յուրաքանչյուրի սրտում։

Հայրենասիրության զգացումը զարգանում է մանկուց՝ պատմության դասերից, հերոսների շիրիմին ծաղիկներ դնելուց, ավանդույթների նկատմամբ հարգանքի և կրոնի ընդունումից։ Այս բոլոր իրադարձությունները մեր մտքերում հիմք են դնում, որ մենք պետք է սիրենք մեր Հայրենիքը և փորձենք դա ցույց տալ նրան ամեն մանրամասնությամբ։

Հայրենիքի հանդեպ սերն ամենաուժեղ ու խորը զգացմունքներից է, որը պատել է մարդկանց սրտերը պատմությունից ի վեր։ Այս հույզը սահմաններ չունի և միավորում է մեզ մեր հայրենիքը պաշտպանելու և փառաբանելու ընդհանուր ցանկության մեջ։

Մեծն բանաստեղծ Համո Սահյանը Հայրենիքի մասին

Եվ իսկապես, Սահյանի ստեղծագործությունները պարզ են, միևնույն ժամանակ խորն ու մինչև հոգու հատակը հասնող։ Նրա գրչով ամեն հայկականն ավելի պատկերավոր է ներկայացված. մեր հույզերը, ապրումները՝ հայրենիքի, մեր երկիրն ամբողջացնող յուրաքանչյուր խորհրդանիշի, ամեն քար ու թփի մասին։

Հայաստան ասելիս

Հայաստան ասելիս այտերս այրվում են,
Հայաստան ասելիս ծնկներս ծալվում են,
Չգիտեմ ինչու է այդպես։
Հայաստան ասելիս շրթունքս ճաքում է,
Հայաստան ասելիս հասակս ծաղկում է,
Չգիտեմ ինչու է այդպես։
Հայաստան ասելիս աչքերս լցվում են,
Հայաստան ասելիս թևերս բացվում են,
Չգիտեմ ինչու է այդպես։
Հայաստան ասելիս աշխարհը իմ տունն է,
Հայաստան ասելիս էլ մահը ո՞ւմ շունն է...
Կմնամ, կլինեմ այսպես։

Մեր հայրենիքի խորհրդանիշները

Պետական խորհրդանիշների՝ Հայաստանի Հանրապետության զինանշանի, Հայաստանի Հանրապետության դրոշի, Հայաստանի Հանրապետության օրհներգի հանրահռչակման և քաղաքացիական դաստիարակության ազգային ծրագրի մշակումը բխում է Հայաստանի Հանրապետության հասարակության քաղաքացիական, հայրենասիրական գիտակցության բարձրացման, հոգևոր ներուժի խթանման անհրաժեշտությունից: Ծրագիրը ենթադրում է պետականամետ աշխարհայացք ունեցող քաղաքացու դաստիարակություն, որը կդրսևորվի հայրենիքի, հասարակության բարօրությանն ուղղված պատասխանատվության զգացումով, ինչպես նաև պետությանը գիտակցված ծառայելու պատրաստակամությամբ Ծրագիրն ունի ազգային անվտանգության ապահովմանը միտված ռազմավարական նշանակություն, ինչը պետական կառույցների և դրանց գործառույթների հետագա կատարելագործման ու զարգացման գործընթացի կարևորագույն բաղկացուցիչներից է՝ կոչված ստեղծելու Հայաստանի Հանրապետության քաղաքական, կրթական, մշակութային կայուն զարգացման երաշխիքներ, ազգային և համամարդկային արժեքների, հայրենիքի, պետականության գիտակցման արմատավորման համար նպաստավոր պայմաններ:

Գործնական աշխատանք

Թեման' Իմ հայրենիքը Հայաստանն է.

Խնդիրները՝

• Երեխաներին ծանոթացնել Հայաստանի քարտեզին, ՀՀ զինանշանին, դրոշին ընդհանրացնել տարվա ընթացքում երեխաների ստացած տեղեկությունները մեր երկրի հայտնի վայրերի մասին: Դաստիարակել սիրո և հպարտության զգացում:

• Զարգացնել երեխաների խոսքը:

• Պարապմունքների ժամանակ ստացած գիտելիքների հիման վրա երեխաներին սովորեցնել հյուսել կապակցված փոքրիկ պատմություններ' առաջարկվող թեմայի շուրջ, ամրապնդել հարցերին պատասխանելու նրանց ունակությունը, մասնակցել զրույցին:

• Շարունակել աշխատանքը ստեղծագործության բովանդակությունն առանց բացթողման պատմելու, արտահայտիչ խոսք կառուցելու կարողությունների ձևավորման շուրջ:

• Հարստացնել երեխաների բառապաշարը:

Անհրաժեշտ պարագաներ՝ ՀՀ քարտեզը, դրոշը, զինանշանը, օրհներգը, նկարներ Հայաստանի քաղաքների և գյուղերի մասին:

Պարապմունքի ընթացքը

Ընթերցել Սարմենի <<Հայրենիք>> բանաստեղծությունը

Զրույց բանաստեղծության բովանդակության շուրջ

Զրույցի մոտավոր բովանդակությունը.

- Ինչի՞ մասին է բանաստեծությունը

- Ի՞նչ է նշանակում Հայաստան բառը մեր բոլորի համար:

-Ինչպե՞ս են անվանում մեր հանրապետությունը Հայաստանի Հանարապետություն:

- Եկեք քարտեզի վրա ցույց տանք Հայաստանի տարածքը և պատմենք՝ ինչեր կան մեր երկրում մեծ և փոքր գետեր, Սևանա լիճը, բարձր և ցածր սարեր, լեռներ, անտառներ, դաշտեր.

- Ուշադիր դիտեք քարտեզը և որոշեք, որ գույներն են գերիշխաւմ Հայաստանի տարածքում /քննարկել, թե որ գույնն ինչ է նշանակում/:

- Ինչո՞վ է հարուստ մեր երկիրը:

Օգտվելով աշխարհագրական քարտեզից՝ երեխաներին օգնել, որ նրանք պատմություն հյուսեն ՀՀ տարածքի և նրա հարստության մասին:

ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆ ԱՄՓՈՓԵԼ ԱՊԼԻԿԱՑԻՈՆ ԱՇԽԱՏԱՆՔՈՎ

ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ԴԻՏԱՐԿՈՒՄ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Դաստիարակ - Արմինե Ադամյան

Խումբ - ավագ

Ամսաթիվ - 01.12.2023թ.

Համակցված պարապմունք-Խոսքի զարգացում և ապլիկացիա

Պարապմունքի թեմա – Իմ հայրենիքը Հայաստանն է

Պարապմունքի նպատակ - Երեխաների մեջ հայրենասիրության դաստիարակում, ծանոթացում հայրենիքի խորհրդանիշերին, պատմամշակույթային արժեքներին: Զարգացնել երեխաների կապակցված խոսքը,հարստացնել բառապաշարը:

Դիտման նպատակը.

- Ինչպիսի՞ն էր երեխաների կապակցված խոսքը, բառապաշարը:
- Ապահովվածությունը անհրաժեշտ դիդակտիկ նյութերով:
- Երեխաների ներգրավվածությունը և ակտիվությունը ողջ պարապմունքի ընթացքում:
- Պրապմունքը հաջողվա՞ծ էր , թե՞ ոչ: Դաստիարակը հասա՞վ իր նպատակին:

Պարապմունքը անցկացվեց խմբասենյակում: Դաստիարակը պարապմունքը սկսեց հայրենասիրական բանաստեղծությամբ՝ մեծ պաթոսով ընթերցելով Սարմենի ,,Հայրենիք,, բանաստեղծությունը: Երեխաների ոգևորությունը շատ մեծ էր:Բացատրվեցին անհասկանալի,նոր բառերը: Պարապմունքի պատին Հայաստանի քարտեզն էր, զինանշանը, եռագույն դրոշը, ինչպես նաև Հայաստանի տեսարժան վայրերի գունեղ պաստառները : Դաստիարակի խոսքը գրագետ էր,խոսելիս փոխում էր ձայնի ելևէջները, ինչն էլ ավելի էր կենտրոնացնում երեխաներին: Երեխաները հեշտությամբ էին գտնում խոսքային միջոցներ

արտահայտվելու և հյուսելու փոքրիկ պատմություններ, նրանց խոսքը կապակցված էր՝ ամբողջական: Ակտիվացնող վարժությունները կատարվեցին հայրենասիրական երգի ներքո: Պարապմունքի վերջում կատարեցին ապլիկացիոն աշխատանք: Այն բարդ չէր և երեխաները թղթե փոքր կտորներով ստացան տարբեր պատկերներ եռագույն դրոշներով:

ԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Պարապունքը մեթոդապես ճիշտ էր կառուցված՝ կիրառելով ուսուցման ժամանակակից ԽԻԿ մեթոդները: Պահպանված էին պարապմունքի բոլոր փուլերը: Պարապմունքը հաջողված էր, դաստիարակը հասավ իր նպատակին՝ տալով երեխաներին գիտելիքներ հայրենիքի, հայրենասիրության, պատմամշակույթային արժեքների մասին: Դաստիարակի կողմից ներկայացված թեման շատ արդիական է և անհրաժեշտ նախադպրոցական տարիքի երեխաների դաստիարակության գործում, քանի որ նրանց մեջ հայրենասիրություն դաստիարակելով ձևավորվում է նրանց արժեհամակարգը:

Պարապմունքը գնահատել «գերազանց»:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- **http://www.hayzinvor.am/74250.html?fdx_switcher=true**
- https://grqamol.am/article/hayreniqi-masin/
- Չիբուխչյան, Լ. Սարգսյան՝ Մայրենի լեզվի պարապմունք, մա նկապարտեզի ավագ խումբ՝ ուսումնամեթոդական ձեռնարկ:
- Bazarova O. B. «Նախադպրոցականների բարոյական և հայրենասիրական դաստիարակություն»